ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն«Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 7 կետի,«Նորմատիվ իրավական ակտերի մասին»օրենքի 37-րդ հոդվածի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել՝Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի կամավոր խնդիրները,դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը համաձայն հավելվածի :
2.Ուժը կորցրած ճանաչել 2018թվականի մայիսի 18-ի «Ակունք համայնքի ղեկավարի կամավոր խնդիրները,դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 31 որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԵԽԱԿՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՈՌ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

Հավելված
Համայնքի ավագանու 2022թվականի
փետրվարի 28-ի 12 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ,ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն կարգով սահմանվում է համայնքի կամավոր խնդիրները ,դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման նպատակով բյուջեի համապատասխան հոդվածներից տրամադրվող ֆինանսական աջակցության:

Ֆինանսական աջակցությունը տրամադրվում է՝

1. Համայնքի բնակչի թաղման կազմակերպման համար, մինչև 100 000:

2. Համայնքի բնակչի բուժման ծախսերի .

1) հրատապ վիրահատության համար մինչև 300 000 դրամ

2) կարիքավոր ընտանիքների անդամներին բուժման նպատակով օգնություն, մինչև 100 000:

3. Համայնքի բնակչի ուսման ծախսերի համար, մինչև 100 000 դրամ:

4. Համայքնի բնակիչի սոցիալապես ծանր պայմանների համար մինչև 100 000 դրամ:

5. Հրդեհի հետևանքով տուժած համայնքի բնակչի ընտանիքին մինչև 300 000 դրամ:

6. Համայնքի բնակիչներին հայրենիքին մատուցած ծառայությունների համար միանվագ ֆինանսական աջակցություն տրամադրել.

1) մարտական խաչ 1-ին աստիճանի շքանշանի համար տրամադրել մինչև 700 000 դրամ ,

2) մարտական խաչ 2-րդ աստիճանի շքանշանի համար տրամադրել մինչև 400 000 դրամ

7.Համայնքի բյուջեից համայնքի կազմի մեջ ընդգրկված բնակավայրերի դպրոցներին կապիտալ շինարարության և ընթացիկ վերանորոգաման համար տրամադրել դրամաշնորհ տարեկան մինչև 30 000 000 դրամ: